



792+4 Ap

Հ-16

ԼԵԻՈՆ ՀԱԽՎԵՐՏԵԱՆ

ՍՓԻՒՌԱՀԱՅՈՒԹԵԱՆ

ՀԵՏ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷ

ՀԱՅԿԱՊԱՆ ՍՍՀ

«ԳԻՏԵԼԻՓ»

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆ—89

ԶՐՈՅՑՆԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԱՍԻՆ

792+4Ap | 2549

2-16 | 244467346 L:

20033667 24367667

194066:

1989:

ՍՓԻՒՌԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ «ԳԻՏԵԼԻՔ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ ՀԱԽՎԵՐՏԵԱՆ

ԶՐՈՅՑՆԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԱՍԻՆ

5452

✓



Արեւմտահայերէն վերագրումը և խմբագրելը՝
ՊԵՏՐՈՍ ՊԷՏԻՐԵԱՆ

Комитет по культурным связям
с армянами за рубежом
Общество «Знание»

ЛЕВОН АХВЕРДЯН
Беседы об армянском языке
(на арм. языке)
«Знание», Ереван, 1988

Committee for Cultural Relations
with Armenians Abroad
„Knowledge” Society

LEVON HAKHVERDIAN
Talks on Armenian Language
(in Armenian)
„Knowledge”, Yerevan, 1988

Ձիս պահապան հրեշտակ Հայ Լեզուի կը կոչէք. ո՞ր էր քէ ունենայի հրեշտակի մը քեւերն ու քոյիչքը, քոչիի հասնէի քաղաքէ քաղաք. դոնէ դուռ, եւ ամէն Հայու սրտին մէջ հրդեհներ հանէի, Հայ Լեզուն սիրելու, գգուելու, անոր վրայ գորգուրարու:

2. ԱՐՍՆԵ ՂԱԶԻԿԵԱՆ

1. Լաւ խօսքի առաջին նշանը

Մի կարծէք թէ «Լաւ խօսք»ը բոլոր մարդիկ նոյն ձեւով կը հասկնան: Մարդիկ կան որ «Լաւ խօսք», գրաւոր թէ բերանացի, կը նկատեն դժուարամտելի բառերով հիւսուած փարթամ խօսքը: Ուրիշներ ալ կան որ յստակ, պարզ, ամէնուն մատչելի խօսքը կը հաւնին: Ոմանց դիւր կու գայ մաքուր գրական խօսքը, ուրիշներուն՝ ժողովրդական ոճերով, մինչեւ իսկ դաւառաբարբառային դարձուածքներով համեմուած խօսքը: Ճաշակի խնդիր է:

Կ'ըսուի թէ ճաշակի մասին չեն վիճաբանիր (թող որ ասոր վրայ յաճախ կը վիճաբանին, եւ բաւական մեծ կիրքով, անզիջում): Ի՞նչ որ ալ ըլլայ, լաւ խօսքը յատկութիւն մը ունի որ անվիճելի է, բոլոր ճաշակներուն համար պարտադիր:

Ի՞նչն է այդ:

Անտարակոյս՝ խօսքին նիշդ, ստոյգ ըլլալը:

Հասկանալու համար թէ ասով ի՞նչ ըսել կ'ուզենք, փորձեցէք երեւակայել թէ ի՞նչ պիտի ըլլար, եթէ մարդիկ զրկուած ըլլային խօսելու, ճիշտ խօսելու ընդունակութենէ: Շոգեկառքերը պիտի կենային, որովհետեւ մեքենավարը պիտի չզիտնար թէ ո՞ր ուղղութեամբ մեկնելու է: Թերթեր պիտի չտպագրուէին, ձայնասփիւռը, պատկերասփիւռը պիտի չլռէին, ու մենք պիտի չզիտնայինք թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ երկրագունտի վրայ, աշխարհի տարբեր ծայրերը: Հեռաձայնը պիտի դառնար անպէտ առարկայ մը. մարդիկ պիտի չկարենային հաղորդակցիլ, բացատրուիլ, ուրեմն՝ շարունակել իրենց համատեղ գոյութիւնը, եւ պիտի թուէր մեզի թէ անծանօթ մոլորակ մը ինկած ենք ուր ոչինչ մատչելի է մեզի:

Կը յիշէ՞ք Բաբելոնի աշտարակաշինութեան առասպելը: Բաբել-

լացիք կ'որոշեն այնպիսի աշտարակ մը կառուցանել որ մինչև երկինք հասնի: Կը սկսին գործի: Մարդոց այս յանդգնութիւնը մեծապէս կը բարկացնէ Աստուած, եւ իրենց ծրագիրը վիժեցնելու համար Ան ամենէն լաւ միջոցը կը գտնէ. կը խառնէ անոնց լեզուն: Մինչ այդ պահը զիրար հասկցող մարդիկ կը սկսին խօսելու տարբեր լեզուներով, եւ այնպիսի շփոթ մը ծալք կու տայ իրենց մէջ որ կատարեալ իրարանցում կը սկսի: Այլեւս ի՞նչ շինարարութիւն, ի՞նչ բան. գործը փառաւորապէս կը ձախողի:

Առանց զիրար հասկնալու՝ մարդիկ ոչինչ կրնան բնել,— կը խրատէ այս հինաւորաց իմաստուն առասպելը:

Ըսենք նաեւ թէ լեզուն ոչ միայն ներկայիս մարդոց հալորդակցութեան գործիքն է, այլեւ այն միակ միջոցը որով տարբեր սերունդներ, տարբեր դարաշրջաններ «կը խօսին» իրարու հետ: Լեզուն է որ կ'արձանագրէ, կը պահպանէ, յաջորդաբար սերունդներուն կը փոխանցէ մարդկութեան ձեռք ձգած գիտելիքները, փորձառութիւնը: Գիտենք թէ Իսահակ Նիւթըն գտած է Ներքի Քաշտուրթեան օրէնքը. ի՞նչպէս պիտի կարենար ան իր ժամանակակիցներուն եւ յետնորդ սերունդներուն հաղորդել իր գիտքը, եթէ ոչ միայն լեզուի միջոցով: Լեզուի շնորհիւ է որ մենք իրազեկ կ'ըլլանք թէ ի՞նչպէս աշխատած, ապրած, մտածած են մարդ արտածնները, մեզմէ հազարաւոր դարեր առաջ: Ահա թէ ինչո՞ւ այսօր գիտնականները գլուխ կը կոտրեն գտնելու համար հետաւոր ժամանակները ապրած ու անհետացած, բայց իրենց գիրերը ձգած լեզուներու բանալին. որպէսզի գիտնան թէ ինչե՞ր եղած են այն ատենները, եւ ի՞նչպէս եղած են:

Վերջապէս՝ լեզուի միջոցով է որ մենք կարելիութիւնը ունինք ուրիշին հաղորդելու մեր միտքերը, զգացումները, մեր վիշտերը եւ ուրախութիւնները, մեր համակրանքը եւ հակակրանքը:

Ուրեմն՝ որքան ճիշդ, ստույգ ըլլայ մեր խօսքը, այնքան աւելի լաւ պիտի անիկա ծառայէ կէտ նպատակի մը՝ մարդոց իրերահաղորդակցութեան: Իսկ ստույգ խօսքը աւելորդաբանութիւններէ զերծ, միտքի կամ յուզումի էութիւնը ճիշդ ընտրութեամբ բառերով արտայայտող խօսքն է անշուշտ:

Այդպիսի խօսք ձեռք ձգելու, մշակելու է. ատիկա ինքնիրեն չի գար, այլ ջանք եւ աշխատանք կ'ուզէ:

2. Ի՞նչպէս լողալ քառերու ծովուն մէջ

Որմնագիրը պատ կը շարէ: Իր նպատակն է որ պատը ըլլայ ամուր, այլևս գեղեցիկ միանգամայն: Վարպետը իր շուրջ, գետինը թափուած քարերէն մէկը պատահաբար չէ որ կ'առնէ եւ եղածին պէս կը դնէ պատին. ան կը դնէ ամէն մէկ քարը, կ'ընտրէ նայելով թէ նոր քարը պիտի բռնէ՞ նախորդներուն, աղէկ պիտի նստի՞, պիտի ըլլա՞յ թէ՛ հաստատուն, թէ՛ գեղեցիկ:

Ուրիշ խօսքով՝ որմնագիրը կը ջանայ ներդաշնակութիւն ըստեղծել շարուածքին մէջ, մեկնելով երկու նկատումներէ՝ գործնական (որ կը վերաբերի պատին ամրութեան) եւ գեղեցկագիտական (որ շէնքին գեղեցկութիւնը պիտի կազմէ): Սակայն այս ալ ըսենք թէ պատշաճող քարերը ընտրելու համար վարպետը ընտրելու կարելիութիւն ալ ունենալու է. որքան մեծ ըլլան կարելիութիւնները, այնքան աւելի լաւ:

Նոյնն է նաեւ խօսքը «շարող»ին պարագան. որքան հարուստ ըլլայ իր բառապաշարը, այնքան դիւրին կ'ըլլայ գործը: Այս «քարը» (բառը) եթէ չյարմարի, կ'առնէ միւսը, երրորդը... մինչեւ որ ամենէն յարմարը գտնէ:

Ճիշդ նոյնը կ'ընենք ուրեմն մենք ալ, երբ կը խօսինք կամ կը գրենք. բառեր կ'ընտրենք, մեր նպատակին համեմատ:

Երբեմն ընտրութիւնը երկար կը տեւէ: Նշմարած էք թէ ի՞նչպէս մարդ երբեմն կը կմկմայ, յարմար բառը ժամանակին չգտնելուն համար: Այդ ընտրութիւնը երբեմն շափաղանց տեսական, նույնիսկ տանջալից գործ մը կ'ըլլայ. բանաստեղծ մը կրնայ օրերով փնտռել իր ուզած բառը եւ չգտնել: Բառերու ընտրութիւն կ'ըլլայ նաեւ առօրեայ խօսակցութեան ժամանակ. ատիկա կրնայ անբռնալի ակնթարթ մը տեսել միայն: Մեր ամենէն յուղուած պահուն իսկ կը ջանանք մեզ համակած յուզումին յատկապէս փառաշաճող բառը կամ արտայայտութիւնը գտնել:

Բառերը ըստ մեր ապրումին ու տրամադրութեան գտնելու համար սակայն, հարուստ բառապաշար ունենալու ենք, եւ ճաշակ միանգամայն:

Արդ, ի՞նչպէս «լողանք քառերու ծովուն մէջ»:

Ատիկա ո՞վ չի գիտեր որ, — հարցումին հարցումով պիտի ուզէին պատասխանել ոմանք: Եթէ ըսածնիդ խօսելու կամ գրելու մա-

սին է, ապա ամէն մարդ արարած ալ քիչ շատ կրնայ թէ՛ խօսիլ, թէ՛ գրել, ըսել է թէ՛ «լողալ բառերու ծովուն մէջ»:

Սակայն լողալ ալ կայ, լողալ ալ: Խնդիրը հոն է թէ ո՛վ ի՞նչ պէս կը լողայ. մարդ կայ որ ձուկի պէս կը լողայ, բառերու ծովուն մէջ ինքզինքը այնպէս կը զգայ, ինչպէս որ ձուկը՝ ջուրի մէջ: Մարդ ալ կայ որ հազիւ հազ ջուրին երեսը կը մնայ: Կարեւորը այն է որ լաւ լողաս, կարելի եղածին չափ լաւ խօսիս ու գրես, այլապէս վայրիվերոյ բառեր գործածելը ի՞նչ օգուտ ունի:

Կասկածէ վեր է թէ աղէկ խօսողն ալ գէշն ալ բառեր կ'ընտրեն վերջապէս: Խնդիրը ուրեմն ընտրութեան որակն է: Ճատրակի խաղի ատեն զօրաւոր ճատրակորդն ալ, տկարն ալ նոյն քարերը կը շարժեն, ի խնդիր բոլոր կարելի քայլերէն լաւագոյնին: Սակայն իրենց կատարած ընտրութեան մէջ երկինքի ու երկրի տարբերութիւն կայ: Այդ է որ կ'որոշէ իրենց խաղի որակին տարբերութիւնը. եւ մենք մէկուն խաղին հետաքրքրութեամբ է որ կը հետեւինք, միւսինին՝ ձանձրոյթով:

Ճիշտ այդպէս՝ լեզուի բառապաշարէն աղէկ ընտրութիւն կատարող անձի մը խօսքը կ'ըլլայ հետաքրքրական, հարուստ, կենդանի, համով-հոտով, գրաւիչ, միւսինը՝ տափակ, աղքատ, անհամ, անհրապոյր:

Կենսաբանութեան մէջ (biology) ծանոթ է «բնական ընտրութիւն» (natural selection) ըմբռնումը. կենդանիները, բոյսերը «բնազդաբար» կ'ընտրուին հոս: Փորձենք ատիկա փոխադրել խօսքի մարզը:

Առօրեայ կեանքի մէջ՝ մարդը խօսելու ատեն կարծէք թէ դարձեալ «բնական ընտրութիւն» կ'ընէ. բառերը եւ դարձուածքները կ'ընտրէ իր բնական հակումներուն, իր բնատրութեան համեմատ, եւ ատիկա իր կնիքը կը դնէ մարդու խօսքին վրայ, այնպէս որ ամէն մէկուն անհատականութիւնը մէջտեղ կու գայ ի՛ր իսկ խօսքին մէջ:

Սակայն ի՞նչպէս կ'ըլլայ ատիկա. չէ՞ որ բոլոր մարդիկ «նոյն աղբիւրէն ջուր կը խմեն», կը գործածեն նոյն լեզուին բառապաշարը:

Ասիկա պարապ հարցում մը չէ: Լեզուաբանները շատոնց փաստած են թէ լեզուն հասարակաց սեպհականութիւնը ըլլալով հանդերձ՝ միեւնոյն ատեն խորապէս անհատական երեւոյթ ունի եւ կը

ցոլացնէ անհատ մարդուն մտածողութեան ու նկարագրին ինքնատպութիւնը:

Ինչի՞ շնորհիւ: Ընտրութիւն կատարելու:

Վերը խօսուեցաւ «բնական ընտրութեան» մասին: Հիմա պիտի ուզէի ձեզի թելադրել «գիտակցական ընտրութիւն»ը, նաեւ «արուեստական ընտրութիւն»ը եթէ կ'ուզէք, զոր կ'ընէ մարդ, ամէն սն-գամ, խօսքի ծովուն մէջ, ոչ միայն բնական մղումով մը, այլեւ իմացութեամբ:

Գիտակցական ընտրութեան պարագան մեծ դեր ունի խօսքի ընտրութեան մէջ, մանաւանդ եթէ մէկը ինքզինքը գրագէտ անձ մը կը նկատէ:

Սակայն ասիկա ընտրութեան ամենէն բարձր աստիճանը չէ տակաւին: Ամենավերինը «ստեղծագործական ընտրութիւն»ն է, որուն վարպետները արդէն՝ գրողներն են, բանաստեղծները. ասոնք է որ կը ստեղծեն գեղարուեստական խօսքի ճշմարիտ արժէքներ: Իսկ արուեստատիր խօսք կը ստեղծուի հոն ուր «ամէն մի բառ, ամէն մի ձեւ կամ ոճ մի մեծ ստեղծագործութիւն է ու մի ամբողջ աշխարհ» (Յովհաննէս Թումանեան):

Ահաւասիկ այդպիսի բառ մը, խօսքի ձեւ մը կամ ոճ մը գտնելու համար է որ շարունակ կը մտածեն բանաստեղծները: Ասիկա է ճիշդ որ կը կոչուի «խօսքի տառապանք»: Ատիկա բանաստեղծներուն ծանր ճակատագիրն է. չէ՞ որ բանաստեղծ «խօսք ստեղծող» կը նշանակէ: Բայն բառը շատ, անսպասելիօրէն շատ իմաստներ ունի (հետաքրքրական պիտի ըլլայ, բառարան նայեցէք), բայց անոր առաջին իմաստը «խօսք»ն է: Իսկ խօսքը, ինչպէս ձեզի ծանօթ է, բառերէ կը ստեղծուի: Ատոր համար է որ բանաստեղծները «կը լողան» բառերու մէջ, բառեր կ'ընտրեն, ստեղծագործական ընտրութեամբ:

Բառերու ծովուն մէջ ամէն մարդ ընտրութիւն կ'ընէ, գտնելու համար այդ պահուն իրեն պէտք եղած արտայայտութիւնը: Ամէն ոք կը ջանայ, բայց տարբեր չափով կը յաջողի...:

3. Ի՞նչ բան՝ բերանացի խօսքը ունի, իսկ գրաւոր՝ ոչ:

Կամ՝ անշուղ խօսքի առաւելութիւններուն մասին

Ի՞նչպէս կ'ըլլայ որ մենք ինչ-ինչ հնչիւններ կ'ատասանենք եւ ատոնց շնորհիւ կարելի կ'ըլլայ իրարու միտքերը, յոյզերը, մտա-դրութիւնները, տրամադրութիւնը, ամէն բան հասկնալը:

խորհած էք երբեք այդ մասին, խորհած ու չէ՞ք զարմացած:

Տեսէք թէ ուս գրող մը ի՞նչ կ'ըսէ խօսակցութեան մարդկային պարզ գործողութեան մասին. «Ահաւասիկ ճոնչաց պարտէզին դռնակը... Ուր է ուր չէ ներս պիտի մտնէ ան, ու մեր միջեւ տեղի պիտի ունենայ աշխարհիս ամենէն սովորական, ամենէն անհասկանալի բանը միանգամայն. պիտի սկսինք զրուցել: Հիւրս, տարբեր ուժ եւ բարձրութիւն ունեցող հնչիւններ արձակելով, պիտի յայտնէ իր միտքերը: Իսկ ես պիտի լսեմ օդի այդ հնչիւնային տատանումները ու պիտի հասկնամ ատոնց իմաստը... եւ իր միտքերը պիտի դառնան իմ միտքերս... Ո՛հ, մեղի համար ռ՛րքան խորհրդաւոր, ռ՛րքան տարօրինակ, ռ՛րքան անըմբռնելի եւ կեանքի ամենէն պարզ երեւոյթները»:

Խորհրդաւոր, անըմբռնելի: Հոս ի՞նչ խորհրդաւոր բան կայ որ. մարդիկ են, սանկ կը խօսին. ատկէ դիւրին գո՞րծ, ատկէ ալ պարզ բա՞ն: Մակայն եկուր տես որ խօսելու, զիրար հասկնալու այդ շնորհը մարդ արարածին մեծագոյն յայտնագործութիւնը կը նկատուի, իր արժէքով շատ աւելի մեծ քան անիւին գիւտը, այն պարզ անիւին, առանց որուն անկարելի է մարդկային պատմութիւնը պատկերացնելը:

Ամերիկացի լեզուաբան Ֆրանքլին Ֆոլսըմ խօսքի գիւտը հրաշքի պէս բան մը կը նկատէ. «Զայնով՝ որ հնչելուն պէս կ'անհետանայ, կարելի է Բաբ քսել, եւ քար հասկնալ, այնքան ծանր ու կարծր բան մը: Այն մարդիկ որ ատիկա յօրինած են, իրականին մէջ յայտնագործած են լեզուի մեծագոյն գաղանխքը»:

Ընդամէնը երեք հնչիւն կ'արտասանենք, եւ Բաբ կը հասկնանք: Այդ նոյն հնչիւնները ուրիշ ձեւով շարելու պարագային (օրինակ՝ բա՛լ) ոչինչ պիտի հասկնանք: Հնչիւնները այնպէս պիտի շարուին, ինչպէս որ հայ մարդիկ «պայմանաւորուած են». եւ անանկ մը կը զգանք թէ Բաբ բառը իրապէս ալ շատ կը նմանի քարի: Իրա՞ւ ատանկ է: Անշուշտ որ ոչ: Ամէն ազգի ու լեզուի ներկայացուցիչ այդ նոյն տպաւորութիւնը կ'ունենայ թէ իր արտասանած բառերը հարազատօրէն կը նմանին համապատասխան առարկաներուն:

Ինծի անանկ կ'երեւի թէ ոչ մէկ բառ այնքան «նման է» հըրդեհի, որքան հրդեհ բառը: Սակայն վստահարար նոյնը կը խորհի նաեւ Ռուսը որ կ'ըսէ փաժառ, կամ Չինացի որ կ'արտասանէ շի՛սօ,

ձև տեսացին՝ էնսանախ, Անգլիացին՝ ֆայր, Ճափոնացին՝
զադժի. ասոնցմէ որեւէ մէկուն մեր հեղին բառը չի խօսիր:

Նախապատմական ժամանակներէն ի վեր ի՛նչպէս գոյացած
են լեզուի մը հնչիւնային իմաստաւորումները, ձայնային եւ քերա-
կանական օրէնքները, — ասոնք շատ բարդ խնդիրներ են, դորս
արծարծած են գիտնականներու բազմաթիւ սերունդներ, եւ որոնք
առիթ տուած են անթիւ վիճաբանութեանց, տարբեր տեսակէտնե-
րու, կարծիքներու բախումի:

Անվիճելիին այն է թէ նախ բերանացի խօսքը եղած է, յետոյ
միայն՝ գրաւորը, բերանացիէն շա՛տ շատ վերջ: Գիտնականներ
կ'ըսեն թէ գրաւոր լեզուն արուեստական լեզու է. մարդիկ են դայն
չօրինած, ինչպէս անիւր եւ լծակը, նետը եւ աղեղը, կացինը եւ
նաւակը: Գրաւոր լեզուն կարելի չէ առանց մեծերուն օգնութեան
գիտնալ, մինչդեռ բերանացին հրեխան կը սորվի բնականօրէն,
ինքնիրենը, առօրեայ կեանքի մէջ: Կը սորվինք գրաւոր լեզուն՝ բե-
րանացիէն միայն 5—6 տարի վերջ:

Ուրեմն, կրնայ ըսուիլ, այլեւս ի՞նչ հոգ. չէ՞ որ տակաւին մա-
նուկ հասակէ բոլորս ալ խոսիլ կը գիտնանք:

Սակայն ինչո՞ւ միեւնոյն լեզուն մէկը ազգի կը խօսի, միւսը՝
գէշ: Դիւրի՞ն բան կը կարծէք այնպէ՛ս խօսիլը որ ձեր խօսքը բարե-
հնչիւն ըլլայ, յստակ, կենդանի եւ բնական, լսողներուն հիացումը
յարուցանէ:

Դիւրին չէ. այլապէս հազարաւոր գիրքեր պիտի չդրուէին բերա-
նացի խօսքի վարպետութեան՝ հոռոտրական արուեստին, քեմական
խօսքին, բանախօսելու արուեստին մասին:

Ի՞նչ տարբերութիւն կայ բերանացի եւ գրաւոր խօսքերուն մի-
ջեւ:

Բերանացի խօսքը անհամեմատ աւելի կենդանի բնատրութիւն
ունի քան գրաւորը, իր ձայնական հնչողութեանը շնորհիւ յուզակա-
նօրէն շաթ աւելի հարուստ է: Բերանացի խօսքին յաճախ կ'ընկե-
րակցին շարժումներ, գիմախաղեր, աչքերու փայլ, մարմինի շար-
ժումներ. խօսողին կենալու կամ նստելու ձեւն իսկ իմաստ մը կը ր-
նայ արտայայտել: Դերասանական վարպետութիւնն ալ ճիշդ այս
ամէնուն կատարեալ իմացութիւնը եւ դորձադրութիւնն է:

Գրողներուն՝ գրաւոր խօսքի վարպետներուն տրուած է իրենց
միտքերը եւ զգացումները ամենայն նրբութեամբ թուղթին յանձ-

նելու շնորհը: Սակայն անո՛նք նոյնիսկ կը խոստովանին թէ բերանացի խօսքը գրաւորէն վեր կը դնեն:

Ի՞նչ բան է որ բերանացի խօսքը ունի, իսկ գրաւորը՝ ոչ:

Ամենէն առաջ՝ ձայնը, չափազանց զգայուն, նուրբ, խորապէս յուզական բան մը որ նոյնիսկ մեր կամքէն անկախաբար յայտնի կ'ընէ մեր տրամադրութիւնը: Հեռաձայնով կը խօսիր ձեր բարեկամին հետ եւ ըսենք թէ չէք ուղեր որ ան գուշակէ ձեր գէշ տրամադրութիւնը: Սակայն միւս ծայրէն արդէն կը լսէք. բան մը պատահած չըլլայ, ձայնդ տեսակ մը կու գայ ինծի...

Ո՛րքան կ'ուզես պահէ, ձայնը կը մատնէ:

Ի՞նչ է ձայնը:

Գիտական-բնախօսական բացատրութիւնը ծանօթ է. թորերը օդ կը մղեն դէպի դուրս, զայն կը հասցնեն կոկորդի մէջ գտնուող ձայնալարերուն, ասոնց թրթռացումը նոյն ինքն ձայնն է: Բերանի մէջ ալո՞ ձայնը հնչիւններու կը վերածուի: Լեզուին եւ շրթունքներուն շնորհիւ: Հոս՝ ամենէն խոշոր դերը ունի լեզուն: Այս հնչիւններն են զորս մենք, գիրեր կոշուող պայմանական նշաններով, կ'արձանագրենք գրաւոր խօսքի մէջ:

Ասիկա, ինչպէս ըսուեցաւ, խնդրին բնախօսական կողմն է: Հոգեբանականը շատ աւելի բարդ է: Ամենէն նուրբ երաժշտական գործիքն իսկ չունի յուզական այն հարստութիւնը, ինչ որ ունի ձայնը:

Կ'ըսեն թաւիշ ձայն, կրծքային ձայն, թաւ ձայն, լեցուն ձայն, սրտագին ձայն, եւ հախառակը՝ շոր ձայն, գլխային ձայն, ապակիէ ձայն...: Այսպէս՝ առօրեայ կեանքի մէջ: Տակաւին կան մասնագիտական բնութագրութիւններ՝ պասօ, պարիթոն, թենոր, սփրանօ, ալթօ...: Դերասանական արուեստն ալ անքակտելիօրէն կապուած է բերանացի խօսքին, ուրեմն եւ ձայնին տիրապետելու արուեստին հետ: Մենք աղէկ կը յիշենք մեր սիրած դերասաններուն ձայնը նաեւ, խօսելու կերպը, արտասանութեան ելեւէջները: Սակայն ինչո՞ւ միայն դերասաններունը: Գոյութիւն ունի տեսողական, այլեւ լսողական յիշողութիւն: Մարդիկ կան որոնց լսողական յիշողութիւնը զօրաւոր է. տարիներով չհանդիպած մարդուն միայն ձայնը լսելով՝ անոնք կրնան գուշակել թէ խօսողը ով է:

Պատճառը այն է որ ամէն մարդ իր ձայնը ունի, անկրկնելի իւրայատկութիւններով, բոլոր թելերով կապուած իր յուզական աշ-

խարհին հետ, կապուած ա՛յնքան սերտօրէն որ կարելիութիւնը կու տայ «ճշմարտախօսութեան մեքենան» ստեղծելու. մարդը կը հարցաքննեն, և մեքենան ցոյց կու տայ թէ անկե՞ղծ կը խօսի թէ՞ կը ստէ:

Ի՞նչն է որ կը մատնէ մարդը: Իր ձայնին երանգը:

4. Ի՞նչ բնեմբ, որ մեզ ուշադիր լսեն

Ատոր համար ջանալու ենք որ մեր խօսքը գրաւիչ ըլլայ թէ՛ բովանդակութեամբը, թէ՛ ձևովը:

Գիտենք թէ աշխարհիս երեսը ամէն բան բովանդակութիւն ունի և ձև: Գիտնանք նաև թէ այս յարաբերութեան մէջ գերիշխողը բովանդակութիւնն է՝ որ կը յուշէ ու կ'որոշէ ձևը: Սակայն իր կարգին՝ ձևն ալ իր անդրադարձը՝ կ'ունենայ բովանդակութեան մէջ:

Հիմա ասիկա փաստենք խօսքի օրինակին վրայ:

Բովանդակութիւնը մեր խօսքին (զրոյցին, ճառին, բանախօսութեան) մէջ ըսելիքն է. ի՞նչ կ'ուզենք ըսել մարդոց: Եթէ լուրջ, արժէքատու ըսելիք մը չունինք, լաւագոյն է որ լռենք, քանի որ միեւնոյնն է, մեզ ուշադիր պիտի չլսեն, որքան ալ գեղեցիկ խօսինք, ձևով, միեւնոյնն է, մեր խօսքը գէշ պիտի ըլլայ: «Եթէ ըսելու բան չկայ, — կ'ուսուցանէ ֆրանսացի փիլիսոփայ և գրող Վոլթեր, — միշտ արդէն գէշ կը խօսին»:

Սակայն մէկու մը կրնայ թուիլ թէ ինք ըսելիք մը ունի. վըստահօրէն կը մօտենայ բեմին, և շատ շանցած մէջտեղ կու գայ որ ըսելիք չունի, կամ ատիկա այնքան ոչինչ բան մըն է որ ատոր համար չէր արժեք ունկնդիրներուն ժամանակը խլել: Մարդիկ կը լսեն ա՛յն չափով ուշադիր, որ չափով որ կարեւոր են ու թարմ՝ մէկումը յայտնած գաղափարները:

Առաջին պայմանը ուրեմն՝ ըսելիք ունենալն է:

Ասօր կը յաջորդեն միւս պայմանները, որոնք ամէնն ալ կարեւոր են:

Ըսելիքը մատուցանելու ձևը գտնելու է: Ինչպէս վերը ըսուեցաւ, ձևին ընտրութիւնը որոշողը բովանդակութիւնն է: Եթէ ձեր խօսքին նպատակը ունկնդիրները համոզելն է, ատոր համար որոշ ձև մը կը պահանջուի, եթէ ոգեշնչելն է՝ տարբեր, եթէ հրճուանք պատճառելն է՝ երրորդ ձև մը, իսկ եթէ տեղեկատուութիւնն է՝ չորրորդ ձև մը, եւայլն: ~

Ենթադրենք թէ նախատակը հասնողելն է:

Այս պարագային փաստեր մէջ բերելու է, չէղոք փաստեր, մէկ, երկու, երեք, հինգ, տասը... փաստ: Յետոյ դատումներ ընել ու եզրայանգումներ, մեկնելով նոյն փաստերէն: Ուրիշ խօսքով, կարենալու է դադափարները կարգի դնել, մէջտեղ բերել իր զօրաւոր ապացուցումները, միշտ յենելով փաստերու վրայ:

Ո՛րքան զորաւոր ըլլան փաստերը, այնքան աւելի ուշագիւր կը լսուի խօսքը. եզրակացութիւններն ալ կ'ըլլան անհերքելի:

Կրցա՞ք ձեր գաղափարները կազմակերպել, ուրեմն ունկրնդիրներուն հետ «ճակատամարտը» շահած նկատեցէք. հակառակ պարագային կորսնցուցած կ'ըլլաք զայն: Գիտցէ՛ք նաեւ թէ բեմը (հրապարակային ելոյթը) մարդը շփոթեցնելու յատկութիւնը ունի: Ատիկա փորձովս գիտեմ: Երբեմն կը թուիս միտքերդ կարգի դրած ըլլալ. գիտես թէ ինչէն ետք ի՛նչ պիտի ըսես: Սակայն ճիշդ խօսելուդ ատենը «թանկագին միտքերդ» գլխէդ կը թռին, կը մոլորիս չիմարանալու աստիճան: Յետոյ երբ, գառնացած, կու գաս տեղդ կը նստիս, միայն ա՛յդ ատեն է որ կը յիշես թէ ի՛նչ պիտի ըսէիր եւ ի՛նչպէս պիտի ըսէիր: Աւա՛ղ, արդէն ուշ կ'ըլլայ:

Եւ գիտցած ըլլաք. երբեք պիտի չկարենաք ուրիշը, առաւել՝ շատերը, ունկնդիր հասարակութիւնը համոզել, եթէ ի՛նչ որ կ'ըսէք, ձեր իսկ համոզումը չէ: Ուրիշ խօսքով՝ կարելի չէ կեղծել, կարելի չէ սուտ խօսիլ, կարելի չէ բան մը ըսել եւ տարբեր բանի հաւատալ: Նախ՝ ատիկա շատ ամօթ բան է: Թիւ երկու՝ ի՛նչ որ ալ ըլլայ, կեղծիքը մէջտեղ կ'ելլէ, ինչպիսի՛ ճարտասանութեամբ ալ որ ջանաս զայն պահել: Կրնայ ըլլալ որ ունկնդիրները, հազար ու մէկ պատճառներով, իրենց դժգոհութիւնը այդ պահուն (կամ առհասարակ) չարտայայտեն, սակայն ատիկա փրկութիւն չէ. կեղծաւոր ճառախօսը փնդդինքը միշտ կը մատնէ:

Ատիկա հասկեցանք կարծէք: Բայց գիտէ՞ք արդեօք թէ անկեղծութիւնն ալ ինքնին տակաւին լաւ խօսքի չափանիշը չէ. մարդ կրնայ վերին աստիճան անկեղծութեամբ քարոզել մերժելի գաղափարներ, ինչպէս Միջնադարու հաւատաքննիչները (inquisitor), որոնք ամենայն անկեղծութեամբ համոզուած էին թէ Ճորտանօ Պրոնոյի պէս մարդիկը խարոյկի վրայ այրելէն աւելի աղնիւ բան չկայ:

Այնպէս որ լաւ խօսքի շահանիշը ոչ թէ անկեղծութիւնն է ինքնին, այլ անկեղծութեամբ արտայայտուած նշմարիտ եւ արդար միտքը:

Ահամայն հարցում մը. եթէ արդար եւ ճշմարիտ բաներ կ'ըսես, պէտքը կա՞յ որ զօրաւոր, բարձրագոյն, ստորագծուած շեշտեր ունեցող խօսքերով ճառես: Բնա՛ւ: Սակայն ինչո՞ւ չէ: Անգլիացի հանձարեղ թատերագիր Շէքսպիր կ'ըսէր. «Իմաստէն աւելի բարձր պոռալ պէտք չէ»: Ըսել է թէ իմաստը միշտ աւելի վեր մնալու է քան խօսքը: Սխալ պիտի ըլլար սակայն հետեւցնել թէ ընդհանրապէս պէտք չէ բարձր ոճ, ցայտուն խօսք գործածել: Նշանաւոր ողբերգակ դերասանները ի պահանջել հարկին բարձր շեշտերու եւ զօրաւոր շարժումներու օգնութեան կը դիմեն, եւ այդպէս է որ կը յաջողին արտայայտել եւ հանդիսատեսին փոխանցել զօրաւոր ապրումներ: Եթէ խորքին մէջ ապրումները զօրաւոր չըլլան, բարձր միջոցները կրնան միայն ծիծաղ յարուցանել:

Առհասարակ՝ ի՞նչպիսի խօսքը դուք կը հանիր, պոռչտաբով, մոլեգին շարժումներով արտասանուածը, թէ՞ զուսպ, մտերիմ շեշտով ըսուածը: Անշուշտ որ երկրորդը, պիտի ըսէք: Ատիկա է գրաւիչը, բայց դժուարը միանգամայն: Զեր ելույթը, ամենամեծ բազմութեան առջեւ իսկ, մտերմիկ եւ անկեղծ զրոյցի երեւոյթը ունենալու է միշտ, եթէ նիւթը կ'արտօնէ՝ նաեւ ժպտերես, զուարթամտութեամբ (humor) թաթխուած զրոյցի երեւոյթը: Մեծ բան է զուարթամտութիւնը, նուրբ զուարթամտութիւնը մանաւանդ: Ատիկա զուարթ շունչ մը կը պարգեւէ ունկնդիրներուն, տեսակ մը թեթեւութիւն կու տայ անոնց, կը փարատէ հնարաւոր տաղտուկը, դանոնք կը մղէ աւելի ուշադիր լսելու:

Ի՞նչ ընենք հապա մեր խօսքին այդպիսի յատկութիւններ տալու համար:

Մի՛ զարմանաք եթէ ըսեմ. ոչի՛նչ ըրէք, ջանացէք այնպէս խօսիլ, ինչպէս սովոր էք խօսելու ձեր ամբողջ կեանքի ընթացքին: Միամիտ ըլլալու է կարծելու համար թէ սովորական խօսելու ոճէն հեռանալով կարելի է յաջողութիւն արձանագրել, եթէ անբնական ձայն եւ շարժումներ գործածէք: Այդ ճամբան դէպի ձախողում կըրնայ առաջնորդել միայն:

Իրա՛ն բեմէն խօսիլը սովորականէն դուրս պարագայ մըն է. ամէն օր չէ որ ելույթ կ'ունենանք: Բայց չէ՞ որ մեր առօրեայ կեան-

քը զրոյցի ձեւին տակ կ'անցընենք, եւ ատոր համար է, որ չենք գնահատեր զրոյցին արժէքը: Յովհաննէս Թումանեանը կը սիրէր ըսել. «Մինչեւ հիմա մեր մտաւորականութիւնը չհասկացաւ ինչ բան է զրոյցը. սա էլ մի տեսակ ստեղծագործութիւն է...»: Նուարդ Թումանեանը՝ բանաստեղծին դուստրը կը վկայէ հօրը մասին. «Նրա զրոյցը չպէտք է խանգարուէր: Չէր սիրում երբ զրոյցի ժամանակ որեւէ մէկը կողմնակի բանով էր զբաղւում կամ ժամ ու ժամանակից հարցնում: Սիրում էր հանգիստ ու լիքը զրոյցը. պարզ, սրտալի, առանց խանգարումի ու ընդհատումի... Խօսում էր հանգիստ, դանդաղ, շեշտով, մեղմ ու կամաց: Չէր սիրում բարձր ձայնով, ինչպէս ինքն էր ասում, գոռալով խօսելը, կամ «ճըղճըղալը»: Չէր սիրում եւ հապշտապ խօսքը՝ «վըտվըտացնելը»: Ասում էր. «Խօսելիս կարգին կը խօսեն»՝ հանգիստ, շեշտով. մարդ իր խօսքին արժէք ու գին պիտի տայ»:

Հաւանաբար նկատած էք թէ Յովհաննէս Թումանեանին գրութիւնները ինչքան նման են կենդանի զրոյցի. կը կարդաք ու ձեզի կը թուի թէ մարդ մը հետերնիդ կը խօսակցի: Կը խորհիք թէ սերտ կապ մը չկա՞յ զրուցող Թումանեանի եւ գրող Թումանեանի մէջ: Անշուշտ կայ: Առաւել՝ գրաւոր խօսքի վարպետ Թումանեանը ճիշդ բերանացի խօսքի վարպետ Թումանեանն է: Բապըրթ Սթիվենսընի՝ «Գանձերու Կղզին» (The Treasure Island) վեպի հեղինակին կարծիքով՝ «գրականութիւնը իր շատ կողմերով ուրիշ բան մը չէ եթէ ոչ լաւ զրոյցի մը ցոլացումը»:

Եթէ մեծ մարդիկ այսչափ կարեւորութիւն կ'ընծայեն զրոյցին, սովորական մարդիկ ալ գիտնալու են անոր յարգը:

Տղաքը կը ջանա՞ն հրապուրել աղջիկները: Անտարակոյս: Ականջ տան թող ուրեմն ճո՞ն ֓րիսթլիին, անգլիացի գրողին որ շատ դժգոհ էր Անգլիացիներէն շատերու խօսքէն («Այնպէս՝ կը խօսին,— կ'ըսէր,— կարծէք Անգլիերէնը նոր յայտնաբերուած ըլլար»): Ահաւասիկ ինչ խորհուրդ կու տայ Փրիսթլի տղոց. «Եւ ձեր առջեւ գաղտնիք մը պիտի բանամ: Ատիկա կը վերաբերի աղջիկներու եւ կիներու, այդ առեղծուածային արարածներուն, որ մեզի հետ քով քովի կ'ապրին, թէեւ մարդկութեան միւս կէսը կը ներկայացնեն: Անոնք անշուշտ կը գնահատեն թէ՛ նորաձեւ հագուստը, թէ՛ արագընթաց ինքնաշարժը, թէ պարահանգէսը, թէ փառքիները: Բայց ինչ որ զիրենք յատկապէս կը կախարդէ ու կը գերէ, դուք պիտի կա-

րենաք իրենց առաջարկել առանց ձեր գրպանը սէնթ մ'իսկ ունենալու: Քանի որ ատիկա զրոյցն է, ոչ թէ դատարկամիտ ու կցկտուր, այլ իրա՛ւ զրոյցը»:

Աղջիկները կը ջանա՞ն հրապուրել տղաքը: Անտարակոյս: Այդ պարագային լսեն թող անոնք խորհուրդը զոր կու տայ նոյն Փրիսթլի իրենց. «Ամուսնութիւնը որուն մասին ձեզմէ ոմանք արդէն կը մտածան, մէկը իրաւամբ երկար զրոյց նկատած է: Ու թէեւ պատմութեան մէջ յիշուած ամենահրապուրիչ կիներէն մէկ քանին միայն գեղեցկուհի եղած են, ատոր փոխարէն բոլորն ալ կրցած են կենդանի, սրամիտ, սքանչելի՛ զրոյց ունենալ: Զրուցելու արուեստի մասին ոչ մէկ բան կ'ըսուի ազդեցութեւ մէջ որոնք ձեզ անվերջ կը խնդրեն, կ'աղաչեն հոգ տանիլ ձեր մտկերուն, մաշկին, կաղմուածքին կամ ձեր հագուստին: Կը հասկնա՞ք թէ ի՞նչն է պատճառը. ձեր զրոյցէն ոչ ոք կրնայ շահ ստանալ, վաստկիլ, ո՛չ ոք՝ ձեզմէ, ձեր մտերիմ բարեկամներէն, այլեւ շատ կարելի է՝ ձեզմով հրապուրուած երիտասարդէն զատ»...:

5. Բան մը կ'ըսենք, հակառակը կը հասկնանք. ինչո՞ւ
այդպէս կ'ընենք: Կամ՝ հեզմանքի մասին

Քաջ ածականը անշուշտ մեծապէս դրական իմաստ մը ունի, սակայն եկուր տես որ բոլորովին ժխտական կը դառնայ երբ կ'ըսենք Քաջ Նազար: Մուռ ածականը, ի՞նչ տարակոյս, դրական ոչինչ ունի իր մէջ, բայց ո՛րքան հրապուրիչ կը դառնայ երբ կ'ըսենք Սասնայ ծռեր (այսպէս կը կոչուին «Սասունցի Դաւիթ» հայկական դիցազնավէպին հերոսները):

Առաջին պարագային (Քաջ Նազար)՝ դրական բնութագրութիւնով ժխտական արժէք կու տանք, ի յայտ կը բերենք ստորագծուած արհամարհական վերաբերմունք: Երկրորդ պարագային (Սասնայ ծռեր)՝ ժխտական բնութագրութիւնով դրական արժէք կու տանք, կ'արտայայտենք հիացական վերաբերմունք:

Երկու պարագաներուն ալ ուրեմն՝ բան մը կ'ըսենք եւ հակառակը կը հասկնանք:

Միտքը արտայայտելու այդ ձեւը հեզմանք կը կոչուի:

Իրաւ որ, մենք կը ձեւացնենք թէ կը գովենք մէկը երբ իրենց կ'ըսենք «խելքի ծով», առաւել՝ «խելքի պոտոտկ», սակայն իրական-

նին մէջ հակառակն է որ կ'ընենք: Ուրիշի մը յանդգնութիւնը, համարձակութիւնը գովելու համար զինք «խենթ» կոչելով կը ձեռացնենք թէ իբր գէշ բան մըն է որ կ'ըսենք, սակայն իրականին մէջ դարձեալ հակառակն է որ կ'ընենք: Եւ այս վերջին անձը՝ մեր «հեգնութեան» առարկան ատկէ բնաւ չի նեղուիր, բնդհակառակն ինքիւնքը շոյուած կը զգայ: Ժողովուրդը իր սիրեցեալ հերոսին՝ Սասունցի Դաւիթին ի՛նչ ածական ըսես փակցուցած է՝ «խելառ» («խենթ»), «թլու» («կակազ») եւայլն, սակայն իբր թէ ժխտական այդ ածականներուն մէջ ո՛րքան խանդաղատանք, ո՛րքան հիացում կայ:

«Իբր թէ», — ասիկա է հեգնութեան սկզբունքը: Իբր թէ բան մը կ'ըսես, սակայն իրականին մէջ ուրիշ բան մը, ճիշտ հակառակը կը հասկնան: Հին Յոյնքն ինկատած են որ արտայայտութեան հեգնական ձեւը անմիջական ապ ունի խնդուքի հետ: Այդ պատճառով հեգնանքը կոչած են նաեւ *αἰνέσιμος*, այսինքն՝ կատակ:

Ինչո՞ւ այս բոլոր մէջքերումները: Յուցնելու համար թէ հին Յոյները ասկէ տակաւին երկու եւ կէս հազարամեակ առաջ խորամուխ եղած էին խօսքի արուեստին մէջ, բացած իր գաղտնիքները, բացատրած անոր ամենանուրբ իւրայայտկութիւնները:

Եթէ հեգնանքը սերտ կապ ունի խնդուքին հետ, եթէ խնդուքն է անոր ակունքը, ապա կարելոր է գիտնալ թէ ի՛նչ է խնդուքը, ե՛րբ յառաջ կու գայ:

Խնդուքը կեանքի հանդէպ մեր վերաբերմունքի արտայայտութիւններէն մին է. խնդուքը յառաջ կու գայ ամէն անգամ որ բովանդակութեան ու ձեւի մէջ հակասութիւն մը նկատուի: Օրինակ՝ երբ վախկոտ մարդը պարծենայ թէ ինք քաջ է, կամ երբ յաղթանդամ մէկը խօսի շատ բարակ ձայնով, երբ հանդիսաւոր եւ լուրջ պահու մը հնչեն անլուրջ կատակներ, երբ տկար արարած մը յաղթէ իրմէ շատ զօրաւոր անձի մը, եւայլն: Ըսենք նաեւ թէ նման հակասութիւններ նշմարելը մարդ արարածին միայն յատուկ է. ծիծաղը ամբողջովին մարդկային յատկութիւն մըն է: Մասնագէտները փաստած են թէ կենդանիները կրնան նոյնիսկ լալ, բայց ոչ խնդալ:

Խնդուքը ուրախ բան մըն է: Այո՛, միաբերան պիտի պատասխանէք: Սակայն մի աճարապարէք. միշտ չէ որ խնդուքը եւ ուրախալին, հեգնանքը եւ հրճուալին զիրար կը բոնեն: «Պատմութեան հեգնանք», «ճակատագրի հեգնանք» արտայայտութիւնները հրճուալի

ռշինչ ունին: Լսած էք այսպիսի դարձուածք մը՝ «արտասուխան խնդուք», երբ չես գիտեր թէ եղածին վրայ խնդա՞ս թէ՞ լսա: Օրինակ՝ Յովհաննէս Թումանեանի «Մի Կաթիլ Մեղրը» առասպելին ներկայացուցած զէպերը, երբ կաթիլ մը մեղրը պատճառ կ'ըլլայ պատերազմի եւ գիւղերու աւերումին: Ասոր մէջ ծիծաղելի՞ն է շատ թէ՞ վշտալին: Արեւմտահայ երգիծաբան Առանձաբը կը պատմէ թրքական բռնութեան պայմաններուն տակ իր գլուխը եկած փորձանքներուն մասին եւ իր գրուածքներուն կու տայ «Վշտի Միծաղ» վերնագիրը:

Խնդուքը կրնայ զայրոյթ յառաջ բերել, նաեւ կարեկցութիւն: Երգիծաբան Յակոբ Պարոնեանը կարեկցանքով է որ իր խնդայ երբ կը ներկայացնէ «մեծապատիւ մուրացիկանները»՝ խեղճ ու կրակ թղթակիցը, բանաստեղծը, նկարիչը կամ ուսուցիչը, որոնք ազգային մշակոյթին ծառայելու համար ստիպուած են շողորորթնութեամբ մեծահարուստը:

Մտերիմ հեղինակ ալ կայ. ատիկա առատօրէն սփռուած է Պարոյր Սեւակի բանաստեղծութեանց «Մարդը Ափի Մէջ» հաւաքածոյին մէջ. հոն բանաստեղծը ինքզինքը «կը ծաղրէ» երբեմն, վարակիչ խնդուքով մը. «Ես նոր հասկացայ Որ շատ եմ նման Փետրուար ամսին, Գիտեմ կարճանալ ու երկարանալ», «է՛հ, մէկ էլ տեսար՝ Պար գալս բռնեց Խարխուլ ու ճօճկան կամրջի վրայ»: Կամ ահաւասիկ ինքզինքը կը նմանցնէ արթնցնող ժամացոյցի որ «սրտաճաք ճիւղով» կ'արթնցնէ մարդիկը որ քնացած չմնան, իսկ մարդիկ ատոր փոխարեն ի՞նչ կ'ընեն իրեն. «Եւ յաճախ: Իբրեւ շնորհակալիք, Գըլ-խիս էք բամփում (կը զարնէք): Եւ ձայնս կտրեմ...»:

Մեր խնդուքը անհոգ ու պայծառ է, երբ կը կարգանք ջրանոսացի Ռասպէի «Պարոն Միւնիսհաուզէնի Զարմանալի Արկածները», երբ կը լսենք Թումանեանի «սուտիկ որսկանին» նետոց-բռնոցները: Եւ մեր խնդուքը հրճուանքով լեցուն է, երբ կը կարգանք թէ Սասունցի Դաւիթը ի՞նչպէս յաղթեց Մսրա Մեւիթին:

Ինչո՞ւ պայմանաւորուած են խնդուքի անհամար երանգները, ամենաթխտականէն մինչեւ ամենահաստատականը: Զեւի ու բովանդակութեան հակասութիւնը կրնայ թէ՛ դրական երեւոյթ ունենալ, թէ՛ ժխտական: Երբ յայտնապէս չար ու դաժան մէկը մարդկային սիրտին բարութեան մասին կը բարբաջէ, ատիկա հակասութիւն մըն է, ժխտական: Խնդուք կը յարուցանէ, սակայն հակա-

կրանքի խնդուք: Իսկ երբ կակազող մանուկը յանկարծ բան մը կ'ըսէ որ իր տարիքին համապատասխան չէ, խնկացի խօսք մը, ասիկա ալ հակասութիւն մըն է, բայց դրական: Այս՝ համակրանքի խնդուք մը յառաջ կը բերէ:

Խնդուքի այս տարբերութիւնները կը պայմանաւորեն խօսքի տարբեր ձևերը: Ժխտական հակասութիւնները ծնունդ կու տան ծաղրի, ծաղր ու ծանակի, դրական հակասութիւնները՝ համակրական խնդուքի, բարեհոգի ժպիտէն մինչեւ քահ-քահ քրքիջը: Ասոնց տարբերութիւնը աղէկ հասկնալու է ոչ միայն լաւ ընթերցող, այլեւ լաւ զրուցակից ըլլալու, բարեկամական շրջանակներու մէջ սիրուելու, կատակէն պարապ տեղը շնորհակցելու, բայց նաեւ կոշտ, ռամիկ կատակով բարեկամը չվիրաւորելու, ժողովուրդին իմաստուն մէկ խօսքը գործածելով՝ 'պատակը դանակի շվերածելու համար:

Զէ՞ք նշմարած արդեօք. կատակ կայ որ ոչ միայն վիրաւորական չէ, այլեւ դիւր կու գայ: Կատակ ալ կայ որ դանակի պէս կը խոցէ մարդուս սիրտը: Ժողովրդական առածները պարապ տեղը ստեղծուած չեն. «Սուրին կտրածը կ'աղէկնայ, լեզուին կտրածը՝ ոչ», «Լեզուի ծակածին համար դեղ չկայ»...: Ո՛րքան վիճաբանութիւններ կամ կռիւններ ծագած են վիրաւորական կատակներու կամ ճիշդ չհասկցուած անմեղ կատակներու պատճառով: Կը պատահի որ մէկու մը մասին ըսեն. ատոր ականջ մի՛ կախեր, կատակի չի դիմանար, աւելի ստոյգ զուարթամտութեան զգացում չունի:

Եթէ մէկը իրապէս զուրկ է զուարթամտութենէ, դժբախտ մըն է: Կարեկցութեան արժանի է անձ մը որ նրբամիտ սրախօսութիւնը (ljoke) չի հասկնար եւ զարմացած երեսիդ կը նայի թէ ուրիշնե՞րը ինչու կը խնդան, ո՛չ սրամտել գիտէ, ո՛չ ալ սրամիտ խօսքը հասկընալ: Տխուր վիճակ է արդարեւ:

Սակայն ամէն յատկութեան պէս՝ զուարթամտութեան զգացումն ալ կարելի է կրթել ու զարգացնել:

Ատիկա այդ աստիճան կերտ՞ր է միթէ:

Այո՛, շատ կարեւոր: Նշմարած էք անշուշտ թէ բարեկամներու շրջանակէն ներս որքան սիրուած կ'ըլլան սրամիտ ու սրախօս տղաքը եւ աղջիկները, որոնք իրենց կատակներով խնդուք ու ժպիտ կը պարգեւեն մերձաւորներուն, կը փարատեն ձանձրոյթը, կը դիւրացնեն դժուար պահերը: Ամէն տեղ, ամէն պարագայի տակ:

Վերջերս մամլոյ ասուլիս մը կարդացի, խորհրդային աստղա-

նաւորդ Կէորկի Կրեչքոյի հետ: Իրեն հարցուցած էին. «Կարելի՞ է տիեզերք թռիլ առանց զուարթամտութեան զգացում ունենալու»: Պատասխանած էր՝ բնա՛ւ: Եւ պատմած էր տիեզերական իրենց կեանքէն դէպք մը. տիեզերանաւուն մէջ երկուքով են: Մէկը կը քնանայ: Միւսը կ'երթայ իր դուռը կը զարնէ: Անիկա կ'արթննայ եւ կը հարցնէ՝ ո՞վ է: Ուրիշ ոչինչ: Սակայն խնդուբը արդէն պատրաստ է. ո՞վ կրնայ ըլլալ դուռը զարնողը, քանի տիեզերքի մէջ միայն երկուքն են:

Ժպիտը, խնդուբը, քրքիշը կեանքին զարդարանքն են, ուրախութիւնը եւ հրճուանքը, ասոնց խօսքային արտայայտութիւնները՝ լեզուի եւ գրականութեան զարդարանքը եւ հրճուանքը:

Կ'ըսենք թէ զուարթամտութեան զգացումը կրթիւն եւ զարգացնելու է: Բայց ի՞նչպէս:

Անշուշտ ամենէն առաջ՝ նշանաւոր երգիծաբաններու գրուածքները կարդալով, սրամիտ դարձուածքներու, աստիճաններու, սրախօսութիւններու, առածներու տրամաբանութիւնը իւրացնելով: Ո՛րքան սրամտութիւն, զուարթամտութիւն, ժպիտ կայ ժողովրդական ասացուածքներուն մէջ. «Գողը եթէ տունէն ըլլայ, եզը տանիքէն կը հանեն», «Լաւագոյն է մուկի գլուխ ըլլալ քան առիւծի պոչ», «Փորձուած սատանան աւելի լաւ է քան չփորձուած հրեշտակը», «Աղջիկս, քեզի՛ կ'ըսեմ, հա՛րս, դուն հասկցիր», «Դրացիին հարսը աղուոր կ'ըլլայ միշտ», «Շիտակը խօսողին ձին թամբած ըլլալու է»...: Որո՞նք եղած են անթիւ-անհամար սրամիտ դարձուածքներուն տաղանդաւոր հեղինակները: Ատիկա բնաւ պիտի չգիտնանք, ինչպէս որ շէնք գիտեր թէ որո՞նք են այդքան շատ սրախօսութիւններ յօրինողները: Ահաւասիկ հատ մը. ատամնաբոյժը մէկ վայրկեանի մէջ ակռան կը քաշէ եւ շատ մեծ վարձք կը պահանջէ յաճախողէն: «Մէկ վայրկեան տեւեց քաշելնիդ, եւ այդքան դրա՞մ», — կը դժգոհի հիւանդը: «Պիտի ուղէիք որ ժա՞մ մը տեւէր», — կ'ըլլայ, սրամիտ բժշկին պատասխանը: Այսպէս պատասխանելու համար խելք ունենալը քիչ է, սրամիտ ըլլալու է, հեգնելու կարողութիւն, զուարթամտութեան զգացում ունենալու է:

Գիտնալու է նաեւ թէ կատակ ընելը «կատակ բան չէ». հոս՝ չափի զգացում պէտք է, «համը չփախցնելու համար»: Զուարթամտութիւնը սանձարձակութեան, կոշտութեան ու գոհակութեան թըշնամին է: Կ'ըսեն թէ ֆրանսական դպրոցներէ ներս զուարթամիտ

պատասխաններու համար մէկ նիշ աւելի կու տան: Ասիկա բնորոշինակելի է, անշուշտ ոչ անպատճառ նիշը բարձրացնելու առումով:

6. Ամենէն գրաւիշը պարզ խօսքն է:
Կամ՝ ածականին օգուտը եւ վնասը

Մոլորութիւն պիտի ըլլար եթէ կարծէինք թէ ածականներով հարուստ խօսքը գրաւիշ է: Ատկէ խարուող մարդիկ Լրեւի բացազանշէին. «Տե՛ս, ի՞նչ ճոխ լեզու ունի, ի՞նչ հոկոտոր է...»:

Իրականին մէջ սակայն, բնաւ այդպէս չէ:

Նախ՝ ի՞նչ բան է ածականը:

Դասագիրքերէն դիտենք թէ ասիկա մասն բանի մըն է որ աւարկայի մը յատկութիւնը կը մատնանշէ:

Պայման չէ որ սիրոյ մասին խօսելու (կամ գրելու) ատեն այդ զգացումը զարգարենք ջերմ, մեծագոյն, հուրախան, բացառիկ, անդիմադրելի, կաթօգին եւ նման ածականներով, կամ «գեղեցկութիւն» բառէն առաջ շարենք՝ անգուգական, հմայիչ, զգլխիչ, զարմանալի, անկարագրելի, եւայլն:

Ինչո՞ւ: Որովհետեւ ածականներու շնայլումը շատ յաճախ ոչ թէ կը զօրացնէ, այ կը տկարացնէ խօսքը: Տարօրինակ է բայց իրաւ. այդպիսի պարագաներու, մանաւանդ երբ խօսքին էութեանը չին համապատասխաներ, տպաւորիչ դարձնելու համար գործածուած ածականները, ընդհակառակն, ժխտական ազդեցութիւն կ'ունենան: Ըսենք թէ մէկը զրամ գտած է եւ տիրոջը վերադարձուցած: Այդպիսի արարք մը կարելի չէ բնորոշել **զարմանալի** ածականով. այս բառը նոյնիսկ իբր վիրաւորանք կրնայ հնչել երբ այդ մարդը աղնիւ բան մը ըրած է, ուրեմն ինչո՞ւ «զարմանալի»: Սովորական ընդունակութեան տէր աշակերտ մը կը գովաբանենք շտեմուած, բացառիկ ածականներով, պարզապէս ջանադիր, բարեխիղճ աշխատանք մը կ'որակենք իբր անձնուէր, իր գործին մէջ քիչ-շատ ջանք թափած մարդը կ'անուանենք անձնագոհ...: Նման պարագաներու՝ բառերը կեղծ կը հնչեն, ամբողջ խօսքը կը դարձնեն կեղծ՝ ամենէն գէշ բանը, կեանքի մէջ թէ խօսքի:

Ուրիշ խնդիր երբ մեկը իր անձը պատրաստ է զոհելու կամ կը զոհէ ալ իր ժողովուրդին համար: Անշուշտ որ անիկա անձնագոհ

կամ անձնուէր է: Երբ մէկը կը նետուի վտանգի մէջ եւ արկածէ, վստահ մահէ կը փրկէ ուրիշի մը կեանքը, անշուշտ որ անոր արարքը հետոսական է: Ինչպէս ալ արտայայտուի ըլլանք մեր հիացումը այսպիսի մարդոց հանդէպ՝ դարձեալ քիչ է:

Ածականը ուրեմն՝ մարդու կամ առարկայի մը գնահատութիւնն է. ուստի այդ երկուքին մէջ ներդաշնակութիւն ըլլալու է: Եթէ կ'ուզէք որ ձեր խօսքը կշիռ ունենայ, անկեղծ ու համոզիչ հնչէ, զգոյշ եղէք ածականներու հետ, մի՛ շռայլէք զանոնք ո՛չ գովելու, ո՛չ ալ յանդիմանելու տեսն: Այլապէս շատ շուտ պիտի կորսնցնէք ձեր եւ ձեր խօսքին հեղինակութիւնը ունկնդիրներուն մէջ կամ ընթերցողներուն: Աւելորդ ածականները, առհասարակ աւելորդ բառերը խոսքի փրփուրն են, պարապ հնչիւններ, որոնք գէշ ծառայութիւն կը մատուցանեն չափի զգացումէ զուրկ մարդոց:

Կը խորհիք թէ «Ձեզ կը սիրեմ» եւ «Ձեզ շատ կը սիրեմ» արտայայտութիւններէն երկրորդը աւելի տպաւորիչ է: Կը սխալիք: Երիտասարդ մը այդպէս պատասխանած է խոշոր գրողի մը եւ... արժանացած անոր հեգնանքին:

Ինչպիսին կրնայ ըլլալ զգացումը. վսեմ, անշահախնդիր, մեծ, շար, նուիրական, նուրբ, կոշտ, առողջ, հիւանդագին, բարեհոգի, քնքուշ, կեղծ, անհաճոյ, մեղմ, ռամիկ, ջերմ, ստոր, հրճուալից, ամօթխած, տագնապալից, խռովալոյզ, մաքուր, ծանր, սթափ, պարզամիտ, մակերեսային, խորունկ, առնական, կանացի, դիւրեկան...: Ասոնցմէ ամէն մէկը իր ոչ միայն իմաստը, այլեւ երանգն ու բոյրը ունի զոր նոյնպէս զգալու է, ընտրելու համար ճիշդ ա՛յն ածականը որ ամենէն աւելի կը համապատասխանէ թէ՛ բնութագրութեան զգացումին, թէ՛ մեր վերաբերմունքին:

Պէտք չէ շատ ածականներ իրարու ետեւէ շարել. ասոնք իրարու կը խանգարեն, եւ կը մատնեն խօսողին կամ գրողին յոռի ճաշակը միանգամայն: Չէ՞ք նշմարած թէ ո՛րքան ծիծաղելի կ'ըլլայ ա՛յն կնոջ շտեմոթիւնը որ շատ զարգեր կը կախէ վրան:

Ուրիշ պարագայ մը եւս մոռնալու չենք. ածականը կը բնութագրէ ոչ միայն առարկան, զգացումը, երեւոյթը, մէկ խօսքով՝ խօսքին նիւթը, այլեւ նոյն ինքն խօսողը կամ գրողը: Եթէ մէկը չափազանցուած, խոշոր-խոշոր ածականներով կը խօսի ուրիշի մը հասցէին, կրնաք իսկոյն գուշակել թէ ան կ'ամ շողոքորթ մըն է, կ'ամ չհասկցող մը:

7. Հայոց Լեզուի արեւելեան ու արեւմտեան
նիւթերուն մասին. ի՞նչ տարբերութիւն

Երբ արեւմտահայ դասական գրողները կը կարդաք կամ կը լսէք իրենց ստեղծագործութիւնները — Պետրոս Դուրեան, Յակոբ Պարոնեան, Միսաք Մեծարենց — ի՞նչ զգացումներ կ'ունենաք: Հայաստանցի դպրոցականը իր դասագիրքերէն արդէն ծանօթ է այդ եւ ուրիշ գրողներու, բանաստեղծներու, կը հասկնայ եւ կը սիրէ զանոնք:

Արդ՝ այդ դպրոցականը պիտի ուզէ՞ր արդեօք որ Դուրեանին նրբակերտ տողերը, այն աստիճան նրբակերտ որ կարծէք ատոնց մարդկային ձեռքը դպած չըլլայ, — պիտի ուզէ՞ր որ ատոնք արեւելահայերէն հնչէին: Օրինակ՝ սա տողերը.

Ինչո՞ւ ապշած են, լըճա՛կ,
Ու չեն խայտար քու ալեակը,
Միթէ հայլոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ:

Կամ կը յիշէ՞ք «Մեծապատիւ Մուրացիականներ»ուն պերճաբան ճառախօսը. «Կար ժամանակ մը ուր խաւարը լուսոյ դէմ կը կոռէր, տգիտութիւնը գիտութեան դէմ, անցեալն ապառնիին դէմ, հրամայականը սահմանականին դէմ, սուրը գրիչին դէմ, առեւտրիւնը սիրոյ դէմ, կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնին դէմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցեալ են, մենք՝ ապառնի, անոնք խաւար են, մենք՝ լոյս, անոնք տգէտ են, եւ մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ...»:

Պիտի ուզէի՞ք որ դատարկահոնձ խօսքի այս փայլուն ծաղրը արեւելահայերէնի վերածուէր: Ո՛չ, պիտի պատասխանէիք հաւանաբար: Եւ արդար պիտի ըլլայիք: Ինչո՞ւ: Որովհետեւ Դուրեանին քնարական նուրբ հիւսուածքը պիտի խաթարուէր, Պարոնեանին երգգիծական փայլը պիտի կորսուէր, ուրիշ խօսքով՝ գեղարուեստական արժէքները խոշոր կորուստներ պիտի ունենային, ինչպէս որ կ'ըլլայ յաճախ, թարգմանութեանց մէջ:

Ատկէ զատ, արեւմտահայերէնը մեզի՝ արեւելահայերու հա-

մար անորոշալի եւ թանկագին հրապոյր մը ունի, զոր մենք երբեք պիտի չուզէինք կորսնցընել:

Սփիւռքի մէջ եւ բազմաթիւ առիթներ ունեցած եմ հարցնելու, եւ հարցուցած ալ եմ սփիւռքահայ եղբայրներու եւ քոյրերու. ձեր ականջին ի՞նչպէս կը հնչէ արեւելահայերէնը: Եւ գրեթէ միշտ նոյն պատասխանը լսած եմ՝ շատ ախորժելի:— Իսկ կատարելապէս հասկնալի՞ է:— Անշուշտ որ հասկնալի է, մանաւանդ եթէ յստակ արեւելահայերէն է, ինչպէս Յովհաննէս Շիրազին, Սիւլա Կապուտիկեանին, Պարոյր Սեւակին լեզուն: Զէ՞ք նշմարած թէ հայ բեմերէն ո՞րքան յաճախ իրարու հետ կը հնչեն արեւելահայ ու արեւմտահայ բանաստեղծներու տողերը:

Սակայն չէ՞ որ կան բառերու գործածութեան եւ շարահիսու-թեան տարբերութիւններ:— Կան, ճիշդ է, բայց համն ալ ճիշտդ ատոր մէջ է, այդ տարբերութեան:

Ուրեմն տարբերութիւններ կան:

Ե՞րբ յառաջ եկան այդ տարբերութիւնները, եւ ի՞նչ տարբերու-թիւններ են ատոնք:

Հին Հայերէնի՝ գրաբարի մէջ այդ տարբերութիւնները չկային: Ատոնք յստակ չէին նաեւ միջին Հայերէնի մէջ, որ իբրեւ գրական լեզու կը գործածուէր Ժ.—Ժէ. դարերու ընթացքին: Այս լեզուն խայ-տաբղէտ է եւ հարուստ. միջին Հայերէնով ստեղծագործած են Շնոր-հալի, Ֆրիկ, Կոստանդին Երզնկացի, Նահապետ Քուշակ, Վարդան Այգեկցի եւ ուրիշներ: Ով որ իրենց ստեղծագործութիւնները կար-դացած է, չի կրնար որոշել թէ անոնց լեզուին մէջ ի՞նչն է գերա-կշռողը, արեւմտահայերէնը թէ՞ արեւելահայերէնը: Որոհտեւ որոշ տարբերութիւն դարձեալ չկայ հոս:

Ատոնք սկսան տարբերիլ ԺԸ., մանաւանդ ԺԹ. դարերուն, երբ արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը սկսան ձեւաւորուիլ իբր գրական լեզուներ: ԺԹ. դարուն կէսերը անոնց տարբերութիւնը ար-դէն իսկ իրականութիւն էր:

Թէեւ փոխադարձաբար հասկնալի, սակայն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի միջեւ կան յստակ ու ակնհիւս տարբերութիւն-ներ: Լեզուաբաններուն կարծիքովը՝ արեւմտահայերէնը գրաբարին մօտ է իր շարահիսութեամբ, արեւելահայերէնը՝ արտասանու-թեամբ:

Բնական հարցում մը. ատոնցմէ ո՞րը աւելի լաւ է, աւելի կատարեալ: Երկուքն ալ լաւ են, կատարեալ, երկուքն ալ մեր ազգային մշակույթին թանկագին հարստութիւնն են: Եթէ լեզուի մը կատարելութեան իբր չափանիշ ընդունինք մարդկային ներաշխարհին ամենանուրբ զգացումները, ապրումներուն ելեւէջները արտայայտելու զօրութիւնը, ապա կարելի՞ Բան է ըսել թէ Վահան Տէրեանին քնարական նրբագեղ հիւսուածքները վար կը մնան Միսաք Մեծարենցին հիւսուածքներէն, կամ ընդհակառակն: Անշուշտ ոչ: Այնուհանդերձ իմ (ոչ միայն իմ) տպաւորութիւնս այն է թէ արեւմտահայերէնը աւելի բարեհնչիւն է, աւելի նուրբ, բայց տեսակ մը գրքային, մինչ արեւելահայերէնը աւելի կոշտ է, բայց աւելի հողեղէն: Առաջինը աւելի աղէկ մշակուած է գեղեցկագիտօրէն, երկրորդը՝ զաղափարապէս:

Անշուշտ գիտէք թէ ի՞նչ ճակատագիր բաժին ինկաւ արեւելահայ ու արեւմտահայ լեզուներուն, քանի որ գիտէք թէ ի՞նչ եկաւ արեւմտահայութեան գլուխը 1915ի Մեծ Եղեռնէն՝ Հայոց ամենադժուար պատմութեան ամենազարհուրելի աղէտէն վերջ: Արեւմտահայութիւնը կոտորուեցաւ թուրք ջարդարարներուն յանցաւոր ձեռքովը, իսկ ազատածները «ցրուեցան ի սփիւռս աշխարհի», իրենց լեզուն ալ հետեւին տանելով: Ատկէ առաջ ալ հայ գաղթօճախներ շատ կային աշխարհի տարբեր հորիզոնականներու վրայ, սակայն Մեծ Եղեռնէն վերջ է որ ատոնք մեծցան, Հայոց պատմութեան մէջ գոյացնելով «Սփիւռք», «սփիւռքահայութիւն», «սփիւռքահայ մշակույթ» ըմբռնումները:

Գիտէք անշուշտ նաեւ թէ ի՞նչ բախտ բաժին ինկաւ արեւելահայութեան եւ արեւելահայերէնին: Հայաստանի մէջ խորհրդային իշխանութիւն հաստատուելուն շնորհիւ երկիրը ազատեցաւ վերահաս աղէտէն, մտաւ տնտեսական, մշակութային, կրթական կեանքի նոր ճամբու վրայ. արեւելահայերէնն ալ դարձաւ այդ կեանքին լեզուն, մեր հանրապետութեան պետական լեզուն:

Այսպէս՝ երկուքն ալ կը պահուին, բայց չափազանց տարբեր պայմաններու մէջ, այն աստիճան տարբեր, որքան տարբեր են Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ ապրող Հայերուն կեանքը եւ կեցութիւնը:

Այս տողերուն հեղինակը որ եղած է հայկական շատ գաղթօճախներ, յուզումով տեսած է թէ սփիւռքահայութիւնը ի՞նչ գերա-

գոյն ջանքեր կ'ընէ մայրենի լեզուն պահելու համար: Իրապէս՝
օտար պարագաներու տակ, երբ շորագին օտար լեզուներ էլ խօսու-
ին, անիկա շատ դժուար գործ մըն է: Թերեւս ճիշդ այդ պարագա-
ները եւ ինքնապաշտպանութեան բնագոյն եւ նաեւ պատճառ
սփիւռքահայութիւնը կը ջանայ օտար բառերը բրնձէ ձեռով հայաց-
նել:

8. Կարելի՞ է ամէն օտար բառ հայացնել

Իմ կարծելովս՝ ո՛չ:

Միտքէս երբեք պիտի չանցնէր թէ օրինակ, սինեմային կարելի
է շարժանկար ըսել, կամ օթօմաթիք հրացանին՝ արագահարում:

Սակայն ահաւասիկ անգամ մը, 1981-ի աշունը հրաւիրուեցայ
Պէյրուսի, Հայկազեան Գոլէճ, դասաւանդելու: Երկու ամիս անցուցի
պատերազմական թոհուրոհի մէջ եղող Պէյրուսի քաղաքը, որ հա-
յահոյ գաղութ մը ունի, իր բազմաթիւ դպրոցներովը, ակումբներովը,
թերթերովը (մեծ դժբախտութիւն պիտի ըլլայ եթէ 1975ին
ծայր տուած եւ միլիչեւ այսօր շարունակուող պատերազմական
իրադրութեան հետեւեւքով մեր այդ ամենագօրեղ գաղթօճախը
քայքայուի):

Պէյրուսահայութեան հետ ամէնօրեայ շփումի մէջ ըլլալով, ես
հայերէն այնպիսի բառեր կը լսէի, զորս ըստ իս անկարելի պիտի
ըլլար հայացնել: Անշուշտ ատկէ առաջ ալ գիտէի որ արեւմտահա-
յերէնը աւանդական նախասիրութիւն մը ունի՝ օտար բառերը հա-
յացնել: Սակայն կը թուէր ինծի թէ այդ հայացումները գրեթէ
են, կը մնան միայն գիրքերու եւ թերթերու էջերուն վրայ, առանց
մոծվելու կենդանի խօսակցական լեզուի մէջ:

Մինչդեռ ի՞նչ նշմարեցի. ամէն քայլափոխի՝ մեծի թէ պզտիկի
բերնէն կը լսէի. «Այս գիշեր հրասայլ մը տեսայ թաղին մէջ»,
«աղուոր շարժանկար», Երեւանի Երաժշտանոցը աւարտած է», «Հա-
մայնավարական թերթերը կը գրեն», «Խորհրդապաշտ բանաստեղծ
է», Արագահարումը ձեռքը առաւ», «Իրապաշտ գրող է», «ընկեր-
վարական սկզբունքներ», «նատրակի մեծ վարպետը», «հիպէական
պատերազմ» եւայլն, եւայլն:

Առաջին օրերը՝ այս բոլորը ինծի շատ տարօրինակ, մինչեւ
իսկ ծիծաղելի թուեցան. չէտոյ կամաց-կամաց վարժուեցայ, եւ այդ

բառերը կ'ընկալէի իբր շատ բնական: Ապա, միջավայրին դրդումովը, ես ալ սկսայ գործածել զանոնք ու համոզուիլ որ ամէն բան սովորութեան խնդիր է. լսէ՛, խօսէ՛, կիրարկէ՛, եւ սովորական ու բնական կ'ըլլան: Չէ՞ որ ատեն մը նեռաձայն, նեծեկանիւ, մշակոյթ եւ շատ ու շատ բառեր անբնական կը թուէին, ետքն է որ բնական դարձան:

— Ի՞նչ անբնական բան կայ հոս, — կը բացատրէին ինծի:

Եւ երբ քիչ ետք իմ յիշելիք բառերը քննեցի իրենց իմաստով ու կազմութեամբ, իրապէս համոզուեցայ թէ ատոնք հայերէն բնական կազմութիւններ են. հրասայլ (հուր արձակող սայլ), շարժանկար (շարժող նկար), երաժշտանոց (երաժշտութիւն ուսանելու տեղ), համայնավար (համայնք վարող), խորհրդապաշտ (խորհուրդ պաշտող), արագահարուած (արագ հարուածող), ընկերավարական (ընկերութիւնը՝ հասարակութիւնը վարող), նատրակ, հիւլէ:

Եւ այպէս շատ ու շատ ուրիշ բառեր:

Այս բոլոր հայացումներուն ես անշուշտ համաձայն չեմ եւ առաջ ալ համաձայն չէի. ինչո՞ւ կտրուիլ միջազգային եզրոյթներէ (term), ինչո՞ւ մեկուսացնել լեզուն: Փոխառութիւններ միշտ եղած են ու պիտի ըլլան. ինչո՞ւ յօրինել դժուար գործածելի բառեր, ի՞նչ պէտք կայ:

Ինծի կ'առարկէին, ոչ պակաս համոզումով. ինչո՞ւ կորսնցնել մայրենի լեզուին բառաստեղծական կարելիութիւնները, ինչո՞ւ հայերէն չըսել ինչ որ կարելի է ըսել, ինչո՞ւ դիմադրկել մայրենի լեզուն ու դիմել անտեղի օտարաբանութիւններու, ի՞նչն է որ մեզ կը ստիպէ:

Ես կը պաշտպանէի իմ դիրքորոշումս ու երբեմն (երբեմն միայն) կը յաջողէի համոզել.

— Որքան ալ իմաստով ճիշդ թարգմանուած ըլլայ, չեմ կրնար իմբեռիալիզմը կայսերապաշտութիւն կոչել, սուսիլոմին՝ ընկերաբանութիւն, տիպալեքիք՝ տրամախօսութիւն: Զայնասպիտը ոչ մէկ անգամ կրնայ փոխարինել ռաթիօին, քան որ վերջինէս կազմուած են շթարգմանող ռաթիօալիք, ռաթիօգործուն, ռաթիօփարոս, ռաթիօշափութիւն, ռաթիօնառագայթ եւ ուրիշ բառեր: Կը փորձէի կատակել.

— Անաթոմի — մարդակազմութիւն, իսկ այժի անաթոմին այ-
ժակազմութիւնն թարգմանենք պիտի:

— Ո՛չ, — կ'ըսէին, — անաթոմի — կազմախօսութիւն:

— Աղէ՛կ, ուրեմն անաթոմը կազմախօսագէտ թարգմանենք
պիտի, իսկ աչքի անաթոմին ալ՝ աչքի կազմախօսութիւն...

Անշուշտ իմ խօսքերս միշտ չէ որ կը տպաւորէին ընդդիմախօս-
ներս: Անոնք կը յամառէին ու կը պաշտպանէին իրենց դիրքորոշու-
մը, աւելի մեծ յաջողութեամբ: Պատճառը թերեւս այն էր որ մեր
անտեղի փոխառութիւնները աւելի շատ են քան արեւմտահայերէ-
նին անտեղի հայացումները: Մանաւանդ երբ կը յիշեցնեն ոչ հե-
ռաւոր անցեալը երբ արեւելահայ գործածական լեզուէն արուես-
տականօրէն գրեթէ դուրս ձգուած էին մշակոյթ, մարզիկ, մարզա-
դաշտ, կենսաբանութիւն, առնակատում, բանասիրութիւն, արտա-
ծում, ներածում, դպրեկան, փառատօն եւ շատ ուրիշ բաներ որ
մեր ականջին այսօր կը հնչեն նոյն հարազատութեամբ:

Այս տեսակ վիճարանութիւնները վերջ չեն ունենար: Բայց եւ
այսպէս ամէն մարդ գիտէ թէ ճշմարտութիւնը մէջտեղ կու գայ վի-
ճարանութեանց ընթացքին:

9. Յովհաննէս, Իւո՞ն, Ճա՞ն, Ժա՞ն, Ճրովա՞նք, Խուա՞ն.

անունդ ի՞նչ է

Լեզուի մէջ շատ բան պայմանական է. եթէ աթոռը սեղան
կոչուէր, առկէ ոչինչ պիտի փոխուէր: Յայտնի է օրինակ թէ
մեծանուն հայագէտ Մանուկ Աբեղեան ելոյթ բառը ստեղծած է
Ելուստի իմաստով (projection), իսկ Ելուստը՝ Ելոյթի, սակայն
կեանքի մէջ ատոնք հակառակ կիրարկութիւնը ունեցան. եւ ասի-
կա բնաւ տարօրինակ չէ: Ամէն բառ կը բովանդակէ այն իմաստը կամ
իմաստները զորս ժողովուրդը կու տայ իրեն: Ծոնաթան Սուէֆթ լի-
լիվուր (զաճաճ) բառը ոչինչէ յօրինած է: Կամ՝ նշանաւոր ուսողա-
գէտ մը չէ գիտցած թէ ինչպս անուանելու է 1-ին քովը 100 հատ
զերօ ունեցող թիւ մը: Հարցուցած է իր եղբօրը իննամեայ դաւկին:
Ասիկա ըսած է, իր մանկական լեզուով, Կուկոյ: Եւ գիտութեան
մէջ ա՛յդ բառը դարձած է վիթխարի թիւին անունը: Շատ կը պա-
տահի որ նախնական պայմանը աստիճանաբար փոխուի եւ բառը
սկսի գործածուիլ ա՛յդ նախնականէն տարբեր իմաստով: Օրինակ՝

ժամանակին պարապել կ'ըսէի: Եւ պարտաւ, անդործ ըլլալ» կը հասկնային, մինչ հիմա արեւելահայերէնի մէջ այդ բառը ճիշդ հակառակ նշանակութիւնը ունի՝ «զբաղի»։ «Աւսանողը պարապում է, մի՛ խանգարէ՛ք»։

Պայմանական են մարդոց անունները նաեւ: Երբ պզտիկը կը ծնի, ծնողքը կ'անուանէր կ'ընեն, անձնաթուղթիւ կը լեցնեն անունով դոր իրենք ընտրած կ'ըլլան: Ուստի ամբողջովին պայմանական է թէ աղջիկը Շուշանի¹ կը կոչուի թէ՞ Սեդա, տղան՝ Յակոբ թէ՞ Վիգէն: Կարելի չէ անշուշտ մեղադրել ծնողքը նաեւ, եթէ իրենց Քաշայր (քաջ + այր) կոչած զաւակը հասակ առնելով բնաւ քաջ մարդ մը եղած չըլլայ, կամ Ժիրայրը՝ Ժիր այրմարդ մը:

Սակայն ծնողք մը կարելի է եւ պէ՛տք է խստորէն կշտամբել այն պարագաներուն, երբ իրենց զաւակներուն անուններ ընտրելու ատեն կը մղուին անզսպելի օտարամոլութենէ, առաւել՝ ազիտութենէ, եւ իրենց յոռի ճաշակը կը փաթթեն խեղճ պզտիկներուն վրիդ:

Մեր նախորդ դրոյցը կը վերաբերէր լիզուական անխուսափելի փոխառութեանց: Կը փոխառուին նաեւ անուններ: Մեր ժողովուրդը հին դարերէ սկսեալ փոխառած է յատուկ անուններ, որոնք հարիւրամեակներու ընթացքին այն աստիճան հայացած են որ հիմա շատեր պիտի դարմանան, եթէ բոլոր թէ Գուրգէն անունը պարսկերէն է (եւ կը նշանակէ «գայլի ձագ»), կամ Յովհաննէս յունարէն է (կը նշանակէ «աստուածաշնորհ»): Հայերս հայացուցած կամ ստեղծած ենք յատուկ անուանց մեր շտեմարանը, զոր մեծապէս կը գործածենք նորածիններուն անուններ շնորհելու համար:

Անշուշտ հոս ալ շեղումներ կ'ըլլան, երբ անուններու անտեղի փոխառութիւններ կ'ըլլան, չափ ու սահման անցնելով: Սփիւռքահայ լրագրող մը վերջերս յօդուած մը ստորագրած էր այս վերնագրով՝ «Հայկական անունը մաս կը կազմէ մեր ազգային դիմագծին»: Սոյն յօդուածը օտարամոլութեան դէմ է. «Ժամանակին մեր հայրերուն անունը կը ժառանգէին մեր զաւակները, եւ այս՝ յուրախութիւն մեզ: Անմիջապէս շարունակենք որ հիմա ալ կայ այդ սովորութիւնը, սակայն գունափոխուած կամ մոտայիկ դարձած: Յակոբը եղած է Ժագ կամ Ծէք (երբեմն ու Ծէքի), Յովսէփը եղած է Ժոզեֆ, Սարգիսը՝ Սերժ:

Եւ շարքը կ'երկարի. նայեցէք ձեր շուրջը:

Զխօսինք տակաւին ոչ հայկական ուրիշ անուններու մասին, ինչպէս՝ Ժորժ, Ալպեր, Արթուր, Ռոպեր, որոնք արմատացած են մեր մէջ, դուրս մղելով նոյնիսկ Վազգէնը, Վահէն ու Վարուժանը:

Հարցը աւելի կը բարդանայ եւ առաւել լուրջ բնոյթ կը կրէ երբ մօտենանք մեր փափկասուն օրիորդներուն անուններուն: Այստեղ շարքը զլիսապտոյտ արագութեամբ եւ բազմաճիւղ կ'երկարի. Ռիմա, Ռիթա, Նաթալի, Իրմա, Միռնա, Այտա, Ժագլին, Նորմա, Լիոնի, Նելլի, Քարոլ, Ալին, Լինտա, Թինա, Լարա...»:

Կրնա՞նք ըսել թէ միայն սփիւռքահայութեան մէջ տարածուած է այս տխուր սովորութիւնը: Դժբախտաբար ոչ:

Կարելի է թէ այսպիսի հարցում մը տրուի. ի՞նչ է այս որ, յատուկ անունն ալ պայմանական բան մըն է, ըսել է թէ էական չէ մարդուս ի՞նչ անունով կոչուիլը:

Պայմանական է, ա՛յո, սակայն ատիկա ալ իր իմաստը ունի: Ո՞րն է այդ իմաստը: Քննենք մեծաթիւ օրինակներէն մին: Ժողովուրդները, մենք ալ մէջը ըլլալով, շատ անուններ առած են Աստուածաշունչէն: Աստուծոյ մէջ մին Յովնանն է, որ Յրանսերէնի մէջ կը հնչէ Ժան, Անգլերէնի մէջ՝ Ճան, ռուսերէնի մէջ՝ Իւան, Գերմաներէնի մէջ՝ Իոհան, Իտալերէնի մէջ՝ Ճիովաննի, Սպաներէնի մէջ՝ Խուան, ամէն լեզուի մէջ ենթարկուելով անոր հնչիւնաբանական ու տառագրութեան օրէնքներուն: Աստուծոյ մէկն ու մէկը լսելով դուք անսխալ կրնաք գտնակել թէ այդ անուանակիրը ի՞նչ ազգի կը պատկանի: Կը կասկածինք թէ Իտալացին իր զաւկին անունը Ճան կամ Իոհան պիտի դնէր, կամ Ռուս մը, մէկզի դնելով իրեն հարազատ Իւանը, տղան Ժան կամ Ճան պիտի կոչէր: Մինչդեռ մենք ճիշդ այդպէս կ'ընենք, մարդը զրկելով իր ազգային ինքնութիւնը ի՞ր իսկ անունովը ճանչցնելու իրաւունքէն:

Ոչ մէկ ժողովուրդ, նոյնիսկ Անգլիացիք, աշխարհ շէջբսփիրեան անուններ ունին, որքան մենք: Սակայն տակաւին աւելի գէշը կայ, շատ աւելի գէշը երբ խեղճ պղտիկները կը կոչեն ուղղակի անհեղեղ անուններով: Ահաւասիկ պատմութիւն մը զոր կը մէջբերէ բանաստեղծ Վահագն Դաւթեան «անուանակոչութեան» այդ ախտին գէժ իր գրած յօդուածին մէջ. «Վերջերս մի առիթով երիտասարդ, 18—20 տարեկան տղաների շրջանում էի: Պատանիներն իրենց ընկերներից մէկին ներքին մի շարաճճի հեգնանքով Կլապ էին անուանում (ռուսերէն «աչք» կը նշանակէ) ու ամէն առիթով ուզում էին

շեշտել դա: Տղան բացայայտօրէն վատ էր դգում իրեն: Պատանիներից մէկին մի կողմ քաշեցի ու ասացի.

— Անջարմար չէ՞, ինչո՞ւ էք այդ լաւ տղային մականուն կը պցըրել ու անվերջ էլ շեշտում էք, չէ՞ք տեսնում վատ է դգում:

Ծիծաղեց.

— Մականուն չէ...

— Հապա՞...

— Իսկական անունն է:

— Ինչպէ՞ս թէ, Կլադ անո՞ւնը կը լինի...

Նորից ծիծաղեց.

— Երեւի մտածել են՝ թող «Կլադ» լինի որ աչք չդիպչի...

Ծիծաղելի է, բայց եւ՝ տխուր:

Խեղճ պզտիկները ի՞նչ յանցանք ունին որ դիրենք այդպէս կը պատժեն, ինչո՞վ յանցաւոր են որ իրենց ծնողքը «ամչցած են» աղագլին անուններէն, տգէտ են անոնք ու անճաշակ:

Ամէն բան կարծէք թէ իր պատճառը եւ բացատրութիւնը ունի, սակայն ո՞րքան կ'ուզես խելք բանցուր, դարձեալ պիտի չկարենաս բացատրել թէ մարդիկ ինչո՞ւ կ'ուզեն իրենց աղջիկը ոչ թէ Յասմիկ ալլ էսմիկ կոչել, ոչ թէ Վարդ ու Վարդուհի ալլ Բող, ոչ թէ Լուսիկ կամ Լուսինէ ալլ Սվեթլանա, ոչ թէ Վիգէն ալլ Տիֆֆի, ոչ թէ Յակոբ ալլ Ժագ, ոչ թէ Գէորգ ալլ Ժորժ կամ Ճորճ եւայլն, եւայլն:

Աղջկանց, մասնաւորաբար տղոց գեղեցիկ, կոկիկ, հնչեղ, ընտիր անուններով շատ հարուստ է Հայերէնի շտեմարանը, որոնցմէ շատեր երես դարձուցած են չես հասկնար թէ ի՞նչ պատճառով:

Ի՞նչ ալ ըլլայ պատճառը կամ բացատրութիւնը, երեսոյթը կը մնայ տգեղ ու անցանկալի:

Այնպէս որ, սիրելի՛ ընթերցողներ, եթէ դուք ալ ուշագիր ըլլաք ու հետեւիք որ ձեր նորածին քոյրերն ու եղբայրները, ձեր ազգականներուն եւ ծանօթներուն զաւակները չկնքուին մարդս ծիծաղելի դարձնող անուններով,— շա՛տ աղէկ պիտի ըլլայ:

10. Գով Լեզուիմ որով կը խօսինք

Ինչո՞ւ կը սիրենք Հայոց Լեզուն, ինչո՞ւ այդ լեզուն մայրենի կը կոչենք:

Թերեւս պատճառը այն է որ մեր լսած առաջին բառերը, առա-

ջին կաթոգին խօսքերը, օրօրոցային երգերը մեր մօրմէ՞ն կը լսենք, եւ ատոր շնորհիւ է որ Հայոց լեզուն մեզի համար նոյնքան հարազատ կու գայ որքան մայրը:

Պատահակա՞ն է միթէ որ շատ յաճախ Մայրենի լեզու եւ Մայրբառերը կը գուգորդուին, կը միահիւսուին.

Ավետիք Իսահակյան

Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից,
Ելնում է ծուխը խրճիթներից հին,
Ուր մայրս անուշ օրօրել է ինձ,
Իմաստաւորել մանուկ իմ հոգին
Քո հզոր լեզուով, երկի՛ր կաթոգին:

Նայիրի Զարեան

Նա առաջին կանչն է եղել դիւցազնական մեր նախահօր,
Օրօրոցից մեզ փայտայել է մայրաբար Հայոց լեզուն:

Յովհաննէս Շիրազ

...Բայց նա է Հայ ով յովադի
Արնախում երախում էլ
Իր մայրենի լեզուով խօսի,
Մօր կաթի հետ ծծած լեզուով:

Պարոյր Սեւակ

«Իբրեւ մօր նայել եւ իբրեւ մօր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասէր եւ մայրախնամ զաւակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչեւ... Վարուժան ու Զարենց»:

«Ինչո՞ւ կը սիրենք մեր մայրենի լեզուն» հարցումին պատասխանելը նոյնը պիտի ըլլար՝ ըսել թէ ինչո՞ւ կը սիրենք մեր հարազատ մայրը: Կը սիրենք մեր մայրը, որովհետեւ ան է որ մեզ ծնած, սնած ու մեծցուցած է: Մայրենի լեզուն ալ մեզ ծնած ու սնած է, մեծցուցած, դարձուցած անհատականութիւններ:

Սակայն վարկեան մը կեցէք. «Մեր մայրը կը սիրենք, որով-

հետեւ...», այսպիսի բացատրութեան մէջ անպատեհութիւն չէ՞ք նշմարել: Պէ՛տք է որ նշմարէք: Քանի որ այդ սէրը բացատրութեան չի կարօտիր: Մարդիկ իրենց մայրը չեն ընտրել իրենց նախասիրութեամբը, ինչպէս չեն ընտրել իրենց հայրենիքը եւ ազգութիւնը: Հայրենիքը, մայրը, ազգութիւնը մարդուս կը տրուին իր կամքէն անկախաբար, մէկ ընդ միշտ, առ յաւիտ, եւ մարդը կը սիրէ (պէ՛տք է սիրէ) դանոնք առանց վերապահութեան:

Ասիկա ամէնքը գիտեն, սակայն ամէն մարդ չէ որ դիտէ թէ մեր մայրենի լեզուն, սկիզբ առնելով ակնհեր դարերու խորերէն, ինչքան դժուար ճամբայ կտրած է, մեր շրթունքներուն վրայ վերստին ծաղկելու համար: Երբ Ե. դարուն մեր ժողովուրդը կորսնցուց իր պետականութիւնը եւ դինական հզօրութիւնը, ասոնց եկաւ փոխարինել Մեսրոպ Մաշտոցին յօրինած հանճարեղ Այբուբենը որ իր զօրութիւնը կը պահէ մէկուկէս հազարմեակ ի վեր: Ասիկա հազուագիւտ բան մըն է ժողովուրդներու մշակութային պատմութեան մէջ: Այս առիթով Ֆրանսացի լեզուաբան Անթուան Մեյէ կը գրէր. «Յայտնի է թէ հայ Այբուբենը գլուխ գործոց մըն է... որ առանց փոփոխութիւն կրելու կը պահուի մինչեւ այսօր...: Այդ լեզուին ճոխութիւնը եւ ճկունութիւնը ուժ եղած են հայ ազգին համար»:

Հայոց լեզուն դարերէ ի վեր մեր ժողովուրդին կեանքէն ներս կատարած է թէ՛ մշակութային-կրթական, թէ՛ քաղաքական-պաշտպանական դեր: Բայց միթէ կարելի՞ է նման խոշոր դեր մը վերագրել լեզուին: Ռուս մտածող-մանկավարժ մը դիտել կու տայ. բոլոր բռնութիւններէն ամենէն գէշը եւ վատթար բռնութիւնն է ժողովուրդի մը լեզուին՝ անոր գոյութեան հիմին հանդէպ: «Ժողովուրդէն ամէն բան խլեցէք, եւ անիկա ամէն բան կրնայ վերադարձնել, սակայն իրմէ խլեցէք լեզուն, եւ ան այլեւս լեզու չի կրնար ստեղծել. կրնայ նոյնիսկ նոր հայրենիք ստեղծել, սակայն լեզուն բնաւ: Եթէ լեզուն ժողովուրդին շրթունքներուն վրայ մեռնի, կը մեռնի նաեւ բուն իսկ ժողովուրդը»:

Ահաւասիկ մեծ ճշմարտութիւնը:

Մեր ժողովուրդը ապրած ու գոյատեւած է, որովհետեւ ամենադժուար դարերուն իսկ պահած է իր լեզուն, իր կարգին լեզուն ալ՝ ժողովուրդը: Ուրեմն մեր մայրենի լեզուն ո՛րքան անելի արժանի է ծնրագիր յարգանքի, սիրոյ, գուրգուրանքի:

Կրնանք չիշել օտարազգի նշանաւոր շատ անուններ, որոնք սիրած ու գնահատած են Հայոց լեզուն: Անգլիացի մեծ բանաստեղծ լորտ Պայրոնը Հայերէն ուսանած է Միսիթարեան միաբաններուն բով, Վենետիկի Սուրբ Ղազար կղզին, և հոն արձանագրած է. «Ճոխ է Հայոց լեզուն և առատօրէն պիտի վարձատրէ զինք ուսումնասիրողը»:

Յայտնի թարգմանիչ Գրիգոր Զիլինկիրեանը «Թշուառներ» վէպը հայերէն թարգմանելու արտօնութիւն ստանալու համար դիմած էր հեղինակին՝ Ֆրանսացի համաշխարհային վիպասան Վերթոր Հիւկոյին: Վերջինս գրած է ի պատասխան. «Զեր հնամենի լեզուն ևս չեմ գիտեր, սակայն կը սիրեմ զայն: Անոր մէջ ևս Արեւելքն է որ կը զգամ, դարեր կը նշմարեմ հոն, կը տեսնեմ անցեալի խորհրդաւոր նշույլն շողարձակումը: Ինծի համար պարծանք է հայերէն թարգմանուիլը»:

Աշխարհի տարբեր հորիզոններու վրայ Հայերէնի ուսումնասիրութեամբ կը զբաղին երեւելի գիտնականներ, հայադիտական կեդրոններ ու ամպլիոններ: Տողերու հեղինակը բախտը ունեցած է ծանոթանալու անոնցմէ մէկուն հետ՝ Ֆրանսացի Ֆրետիլիք Ֆէյտիի, վերին աստիճան բարեկիրթ այլ հմայիչ անձի մը հետ որ հայերէն հիանալի կը խօսի: Ահաւասիկ իր վկայութիւնը Հայերէնի մասին. «Հայոց լեզուն է իմ սիրոյս առարկան... լեզու մը որ զօրութիւնը ունի ազատօրէն և ստոյգ արտայայտելու գիտական խտրորշ միտքը, փիլիսոփայական դադափարները և բանաստեղծական նրբին, բազմերանգ կիսաստուերները (shade) միանգամայն»:

Եթէ Հայոց լեզուն այսպէս կրնան գնահատել ու մեծարել ուրիշ ազգութիւններու պատկանող մարդիկ, որոնց համար այդ լեզուն օտար է, հապա ո՞րքան առաւել մեհնք պարտինք գնահատել զայն, բանի այդ լեզուն մեր կառաջատն է, մայրենին, միակը և անփոխարինելին:

Վահրամ Մամեանը, առաջնակարգ գրող մը որ յուզումնալից շատ էջեր նուիրած է սփիւքահայոց կեանքին, իբր Կիւլպէնկեան Հիմնադրամի պաշտօնեայ տարիներ շարունակ ապրած է Լիզպոն, բայց նաև պտըտած գրեթէ բոլոր երկիրները ուր Հայ կայ, գողտրիկ կտորներու մէջ ներկայացուցած է սփիւքահայուն յուզերը և իղձերը: Մամեանը գրած է նաև գովք մը առ Մայրենի լեզուն, աշխարհ գեղեցիկ և սրտառուշ որ կ'արժէ ատու վերջացնել մեր

այս զրոյցները. «Գիտնա՞ս միայն թէ որքան անհրապոյր են օրերս առանց քեզի ու ես մինակ, առանց քու ձայնին, ներկայութեան, երբ կ'անցնիմ բաղձամարդ, հսկայ քաղաքներու լուսազարդ, օտար մայթերէն՝ ուր ոչ ոք, ոչ ոք ծանօթ է քեզի...»

Քու ներկայութիւնդ բաւական է որ մոռնամ աշխարհը ամբողջ ու գովերգեմ քե՛զ միայն, քեզ որ սիրոյ սիւք ես ու կանչ կարօտի, հառաչ ալեւորի ու ճիշ մանկան. քեզ՝ որ արեւածագին հետ արտերուն վրայ բացուող հորովել ես լուսաշաղախ ու դարաւոր ծառ ծիրանի. քեզ՝ նայիրեան բարտիներու իրիկնային հսկում արարատեան, մեղեդի՛ կապոյտ ու պայծառ երկինք բաղձաստեղեան. քեզ՝ իմ աննման, համբուրելի լեզո՛ւ մայրենի...»:

ԼԵՌՆ ՀԱՆՎԵՐՏԵԱՆ
ԶՐՈՅՑՆԵՐ ՀԱՅՏԵՐԻՆԻ ՄԱՍԻՆ

Հրատ. խմբագիր՝ Թ. Կ. Պետրոսյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Գոյունեան
Տեխ. խմբագիր՝ Շ. Ի. Սարգիսեան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Բ. Պետրոսյան

50 78

Հանձնուած է շարո ածրի 14.09.88: Ստորագրուած է տպագրութեան 12.01.89: Զորմատ 60×84¹/₁₆: Բուլի տպագրական N 2: Տառաւանակ «Գրքի սովորական»: Բարձր տպագրութիւն: Տպագր. 2,25 մամուլ հաշվ. հրատ. 1,69 մամ.: Տպարանակ 1500: Պատուէր 1781: Անվճար:

Հաշկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերութիւն, Երևան—10, Արշակունի փող. 8:

Общес «Знание» Армянской ССР, Ереван—10, ул. Абовяна 8.

Երևանի տեղական համալսարանի տպարան, Երևան, Արշակունի փ. 52:

Типография Ереванского государственного университета, ул. Абовяна, 52.

